Ախուրյան համայնքի 2023թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությանը կից:

Տեղեկատվություն հաշվետու տարում համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից կատարված ծախսերի ուղղությունների և չափերի մասին;

Համայնքի 2023 թվականի հաստատված բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդը կազմել էր 382 301,0 հազար դրամ, որից համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 233-Ն որոշմամբ հատկացվել է՝ 251 000,0 հազար դրամ համայնքի ֆոնդային բյուջեով կանխատեսված ելքերի ֆինանսավորման համար:
Համայնքի ավագանու 2023 թվականի 16 փերտվարի թիվ 11-Ն որոշումով համայնքի ճշտված բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդը կազմել է 443567,9 հազար դրամ, որից 400 000,0 հազար դրամ հատկացվել է ֆոնդային բյուջեով նախատեսված ելքերի ֆինանսավորման համար:
Համայնքի բյուջեի կատարման ընթացքում պահուստային միջոցների փաստացի ծախսը կազմել է 410 968,6 հազար դրամ, այդ թվում վարչական մաս 10 968,6 հազար դրամ, ֆոնդային մաս 400 000,0 հազար դրամ:
ՀՀ Կառավարության կողմից համայնքներում իրականացվող սուբվենցիոն ծրագրերին համայնքի մասնակցությունը ապահովելու, ինչպես նաև սեփական կարիքների համար տրանսպորտային և վարչական սարքավորումներ ձեռք բերելու նպատակով համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից համայնքի բյուջեի ֆոնդային մաս է հատկացվել է 400 000,0 հազար դրամ:
Համայնքի բյուջեի պահուստային ֆոնդի գումարներն ուղղվելեն ներքոհիշյալ ծրագրերին՝ ըստ գործառնական դասակարգման բաժինների և ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների.
Բաժին 1 Խումբ 1 Դաս 1 « Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում » 8500,0 հազար դրամ, որից՝
«Տրանսպորտային սարքավորումներ» 5121 հոդվածին 5000,0 հազար դրամ,
«Վարչական սարքավորումներ » 5122 հոդվածին 3500,0 հազար դրամ:
Բաժին 1 Խումբ 6 Դաս 1 « Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)» 240500,0 հազար դրամ,որից՝
«Այլ կապիտալ դրամաշնորհներ » 4657 հոդվածին 10,000,0 հազար դրամ
« Շենքերի և շինությունների կառուցում » 5112 հոդվածին 180000,0 հազար դրամ
«Այլ մեքենաներ և սարքավորումներ » 5129 հոդվածին 20,500,0 հազար դրամ
« Նախագծահետազոտական ծախսեր »5134 հոդվածին 30,000,0 հազար դրամ

Բաժին 6 Խումբ 3 Դաս 1 «Ջրամատակարարում» 166,526,0 հազար դրամ ,որից՝
«Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» 4251 հոդվածին 5,526,0 հազար դրամ:
«Շենքերի և շինությունների կառուցում » 5112 հոդվածին 161,000,0 հազար դրամ

Բաժին 8 Խումբ 2 Դաս 4 «Այլ մշակութային կազմակերպություններ» 1,800,0 հազար դրամ,որից
«Հատուկ նպատակային այլ նյութեր » 4269 հոդվածին 1,800,0 հազար դրամ:

Բաժին 11 Խումբ 01 Դաս 02 «ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» ծրագրի ներքոհիշյալ տնտեսագիտական հոդվածներով համայնքի ավագանու որոշումների հիման վրա կատարվել են հետևյալ ծախսերը **«Գրասենյակային նյութեր և հագուստ» 4261** հոդվածին է հատկացվել **900.8** հազար դրամ համայնքի թվով 32 դպրոցներում գործող առաջին դասարանի երեխաներին, որպես նվեր գրենական պիտույքներ է ձեռք բերվել:
« Կենցաղային և հանրային սննդի նյութեր » 4267 հոդվածին է հատկացվել **673,8** հազար դրամ**, «Հատուկ նպատակային այլ նյութեր» 4269** հոդվածին է հատկացվել և ծախսվել է **300,9** հազար դրամ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից բռնի տեղահանված և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք տեղափոխված անձանց սննդով և առաջին անհրաժեշտության այլ պարագաներով ապահովելու համար:
Համայնքի բնակավայրերում գործող հանրակրթական դպրոցների տնօրենների կողմից համայնքի ղեկավարին հասցեագրած նամաներով խնդրել են ֆինանսական աջակցություն տրամադրել,համայնքի ղեկավարի կողմից հարցերը տեղափոխվել է համայնքի ավագանու նիստեր և յուրաքանչյուր դեպքի համար կայացվել է առանձին որոշում, որոնց արդյունքում համայնքի բյուջեից **«Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին »4637** հոդվածին է հատկացվել և ծախսվել է **2928,5** հազար դրամ, որից՝
Ախուրյան համայնքի Այգաբաց բնակավայրի «Այգաբացի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության շենքի կոյուղագծի վերանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի պատվիրման համար կազմակերպությանը հատկացվել է 300,0հազար դրամ.
Ախուրյան համայնքի Ախուրիկ բնակավայրի «Ախուրիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ֆիզկուլտուրայի դահլիճի վերանորոգման,մարզական գույքի ձեռքբերման և հինգ կիլովատ ֆոտովոլտային կայանի տեղադրման համար, որպես համայնքային ներդրում կազմակերպությանը հատկացնել 730,59 հազար դրամ.
Ախուրյան համայնքի Վահրամաբերդ բնակավայրի «Վահրամաբերդի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ կազմակերպություն) շենքի վերանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի պատվիրման համար կազմակերպությանը հատկացնել 300,0հազար դրամ.
Ախուրյան համայնքի Ազատան բնակավայրի «Ազատանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ռազմագիտության դասարանի գույքի ձեռք բերման համար կազմակերպությանը տրամադրել 200,0հազար դրամ.
Ազատան բնակավայրի Հայրենական Մեծ պատերազմում զոհվածների հուշարձանի բակում, համայնքային սեփականություն հանդիսացող 0,5 հեկտար մակերեսով հողամասում այգեպուրակ հիմնելու և լոկալ ոռոգման համակարգ կառուցելու համար, որպես համայնքային ներդրում «Ազատանի միջնակարգ դպրոց» պետական

ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրել ծրագրի ընդհանուր արժեքի տասը տոկոսի չափով 347,9հազար դրամ.
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի «Ախուրյանի թիվ 2 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության բակի ցանկապատը նորոգելու և ընդլայնելու համար տրամադրել 700,0 հազար դրամ, իսկ «Ախուրյանի թիվ 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության բակի ցանկապատի նախագծանախահաշվային փաստաթղթերի պատվիրման համար հատկացնել 250,0հազար դրամ.
Ախուրյան համայնքի Շիրակ բնակավայրի «Շիրակի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ մարզադահլիճի վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթեր պատվիրելու համար հատկացնել 100,0 հազար դրամ:
«Այլ ընթացիկ դրամաշնորհներ» 4639 հոդվածին է ըստ ավագանու որոշման հատկացվել 3 400,0 հազար դրամ, որից փոխանցվել է 2 484,6 հազար դրամը,այդ թվում՝
Ախուրյան համայնքի Արևիկ բնակավայրում «ԱՐԴԻՆԻ» կրթամշակութային և տուրիզմի զարգացման հիմնադրամի կողմից 2023 թվականի սեպտեմբերի 23-ին անցկացվող «Լավաշի կախարդանքը» փառատոնին աջակցելու նպատակով տրամադրել 300,0 հազար դրամ.
Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի «Սուրբ Աստվածածին» եկեղեցու ջեռուցման ծախսերի վճարման համար՝ 300,0 հազար դրամ (փոխանցվել է 10,9 հազար դրան)
Ախուրյան համայնքի Ազատան բնակավայրի «Սուրբ Ստեփանոս» եկեղեցու ջեռուցման ծախսերի վճարման համար՝ 500,0հազար դրամ (փոխացվել է 73,7 հազար դրամ)
Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ախուրյանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը դիսպանսեր, ռենտգեն- ֆլյուրոգրաֆիկ կաբինետների վերանորոգման համար տրամադրել 1 000,0 հազար դրամ.
Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրում գործող «Մարինա» մանկապատանեկան կենտրոնի հաշվետու համերգի կազմակերպման և անցկացման համար գեղարվեստական ղեկավար Լիպարիտ Մարկոսյանին տրամադրել 250,0 հազար դրամ.
Ախուրյան համայնքի Մարմաշեն բնակավայրում գործող «Մարմաշենի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ ջեռուցման համակարգ անցկացնելու նպատակով, տրամադրել 200,0 հազար դրամ (որը չի փոխանցվել):
Ախուրյան համայնքի Մարմաշեն բնակավայրում կառուցվող համայնքային կենտրոնի շինարարական աշխատանքներն ավարտին հասցնելու համար «Պանդո» համայնքային զարգացման հասարարական կազմակերպությանը տրամադրել 850,0 հազար դրամ:
«Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից» 4727 հոդվածին է հատկացվել 880,0 հազար դրամ.

Բժշկության ոլորտում 1-ին տեղը զբաղեցրած, Երևանի «Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի» բուժական գործ մասնագիտության 6-րդ կուրսի ուսանողուհի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի բնակիչ Էլլա Արայի Բաղդասարյանին արժանացնել դրամական խրախուսանքի՝ 120,0 հազար դրամի.

Հումանիտար գիտությունների ոլորտում 3-րդ տեղը զբաղեցրած, «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի անգլերեն լեզու և գրականություն մասնագիտության 2-րդ կուրսի ուսանող Վարդուհի Ղուկասի Մուրազյանին արժանացնել դրամական խրախուսանքի 100,0 հազար դիամի չափով.

«Պատմություն» առարկայից 1-ին կարգի դիպլոմակիր, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան գյուղի բնակիչ Անահիտ Արտակի Մնացականյանին՝ 100,0հազար դրամ .

«Հայոց լեզու և գրականություն» առարկայից 3-րդ կարգի դիպլոմակիր, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան գյուղի բնակիչ Երազիկ Վահանի Սերոբյանին՝ 60,0հազար դրամ.

Ախուրյան համայնքի թվով 3 պետական ոչ առևտրային կազմակերպությունները ոսկե մեդալով ավարտած՝ Սամվել Արթուրի Գասպարյանին (գ.Վահրամաբերդ), Անահիտ Կարենի Խաչատրյանին, Մաղլենա Գառնիկի Աղաջանյանին (գ.Կառնուտ), Արփիկ Կարենի Խաչատրյանին (գ.Ախուրյան) թվով չորս շրջանավարտներից յուրաքանչյուրին տրամադրվել է 100,0 հազարական դրամ դրամական աջակցություն՝ ընդամենը 400,0հազար դրամ:

Ախուրյան համայնքի Հացիկ բնակավայրի «Հացիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը ոսկե մեդալով ավարտած Լիլիթ Արտակի Խաչատրյանին տրամադրել 100,0հազար դրամ դրամական աջակցություն:

«Այլ նպաստներ բյուջեից» 4729 հոդվածին է հատկացվել 2,800,0 հազար դրամ.

Ախուրյան համայնքի Շիրակ բնակավայրի բնակիչ Հարություն Վոլոդյայի Մկրտչյանին տրամադրել 500,0հազար դրամ դրամական օգնություն՝ 44-օրյա պատերազմում զոհված որդու՝ Ալեքսան Սաղաթելյանի և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Շիրակ բնակավայրից մյուս զոհվածների հիշատակին նվիրված խաչքարի տեղադրման և տարածքի բարեկարգման աշխատանքների համար:

Ախուրյան համայնքի Բենիամին բնակավայրից 2023 թվականի օգոստոսի 11-ին զոհված զինծառայող Գրանիկ Վարդանի Խնկոյանի հորը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Բենիամին բնակավայրի բնակիչ Վարդան Գրենիկի Խնկոյանին տրամադրել 300,0հազար դրամ դրամական օգնություն:

Ախուրյան համայնքի Հայկավան բնակավայրի բնակիչ Մկրտիչ Էլֆիկի Ավետիսյանին տրամադրել 1,000,0հազար դրամ դրամական օգնություն՝ 44-օրյա պատերազմում զոհված որդու՝ Էլֆիկ Մկրտիչի Ավետիսյանի հիշատակին նվիրված խաչքարի տարածքի բարեկարգման աշխատանքներ կատարելու համար:

Ախուրյան համայնքի Ախուրիկ բնակավայրի բնակիչ Մկրտիչ Արմինակի Մելքոնյանին տրամադրել 1 000,0 հազար դրամ դրամական օգնություն՝ 44-օրյա պատերազմում զոհված որդու՝ Հարություն Մկրտիչի Մելքոնյանի և Հայաստանի

Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրիկ բնակավայրից մյուս զոհվածների հիշատակին նվիրված խաչքարի տեղադրման, տարածքի բարեկարգման և ցանկապատման աշխատանքների համար:
2023թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդի մնացորդը հազմել է 15273,3 հազար դրամ: